Կ-794²-12.03.2024-ՊԻ-011

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հյուպատոսական ծառայության մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-61 օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Արտաքին գործերի նախարարության եւ օտարերկրյա պետությունում հյուպատոսական հիմնարկի կողմից մատուցվող՝ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանքների տրամադրման գործառույթները կարող են պատվիրակվել նաև պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին: Օպերատորների ցանկը, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է Հայատանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2.

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2.Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՆՔ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-794²-12.03.2024-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հյուպատոսական ծառայության մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-61~~-Ն~~ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին ~~պարբերությունից~~ մասից հետո լրացնել նոր ~~պարբերությամբ~~մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

« Արտաքին գործերի նախարարության եւ օտարերկրյա պետությունում հյուպատոսական հիմնարկի կողմից մատուցվող՝ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանքների տրամադրման գործառույթները կարող են պատվիրակվել նաև պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին: Օպերատորների ցանկը, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է Հայատանի Հանրապետության կառավարությունը:~~Արտաքին գործերի նախարարության եւ օտարերկրյա պետությունում հյուպատոսական հիմնարկի կողմից մատուցվող որոշ հյուպատոսական ծառայություններ մատուցելու գործառույթներ՝ իրականացնող Կառավարության լիազորված օպերատորների, օպերատորներին պատվիրակվող գործառույթների ցանկը, օպերատորների հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձեւերը եւ օպերատորների սպասարկման գրասենյակներին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է Կառավարությունը~~»:

Հոդված 2. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2.Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-794-12.03.2024-ՊԻ-011/1), «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-794[1] -12.03.2024-ՊԻ-011/1), «ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ- Կ-794[2] -12.03.2024-ՊԻ-011/1), «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-794[3] -12.03.2024-ՊԻ-011/1) ԵՎ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-794[4] -12.03.2024-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, ***Հոդված 2.,*** **«Իրավաբանական անձանց պետական գրանցման,**	Նախագծի 2-րդ հոդվածի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ	Ընդունվել է: Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, ***Հոդված 2.,*** **«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ,** ***Հոդված 2.,*** **«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում**	փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:		

		կատարելու մասին» օրենքի նախագիծ, ***Հոդված 2.,*** **«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ,** ***Հոդված 2.***			
2.	ՀՀ կառավարություն	**«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացում**	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող նոր պարբերության մեջ նշված «Կառավարությունը» բառն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագիծ, ***Հոդված 1***	ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձեւը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձեւին (տեսքին)»:		
3.	ՀՀ կառավարություն	**«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ,** ***Հոդված 1.***	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված «ՀՕ-61-Ն» հերթական համարն առաջարկում ենք շտկել, նշելով «Հյուպատոսական ծառայության մասին» օրենքի ճշգրիտ հերթական համարը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ,** ***Հոդված 1.***	«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «պարբերությունից» և «պարբերությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «մասից» և «մասով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

5.	ՀՀ կառավարություն	**«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ,** ***Հոդված 1***	«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող իրավակարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Մասնավորապես, **«Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքում** առկա չէ որևէ կարգավորում սպասարկման գրասենյակների կամ օպերատորների վերաբերյալ, և հետևաբար հասկանալի չէ, թե նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասից հետո լրացվող նոր մասում նշված՝ արտաքին գործերի նախարարության և օտարերկրյա պետությունում հյուպատոսական հիմնարկի կողմից մատուցվող «որոշ	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հյուպատոսական ծառայություններ» արտահայտությունը ծառայությունների ինչ շրջանակ է ներառում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասից հետո լրացվող նոր մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արտաքին գործերի նախարարության եւ օտարերկրյա պետությունում հյուպատոսական հիմնարկի կողմից մատուցվող՝ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանքների տրամադրման գործառույթները կարող են		

			պատվիրակվել նաև պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին: Օպերատորների ցանկը, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:		
6.	ՀՀ կառավարություն	**«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ,** ***Հոդված 1***	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող կարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի և լիազորող նորմի հստակության սահմանադրական պահանջի ապահովման տեսանկյունից: Այսպես, համաձայն նախագծի՝ օպերատորների ցանկը սահմանում է	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Կառավարությունը, առկա չէ հստակեցում առ այն, որ հենց առաջարկվող կետում թվարկված ոլորտներում (ներքին գործերի բնագավառում դիմողի նույնականացման, պետական տուրքի գանձման, փաստաթղթերի ընդունման, փոխադրման եւ հանձնման) օպերատորները կարող են գործունեություն իրականացնել: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ նոր կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «իը) իրականացնում է տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի փոխարեն նոր վկայականի, մաշված, անընթեռնելի դարձած հաշվառման		

			համարանիշերի փոխարեն տառերի ու թվերի նույն հավաքածուն պարունակող նոր համարանիշերի, տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագրի տրամադրման, ինչպես նաև կորած հաշվառման վկայագրի փոխարեն նոր վկայագրի հատկացման կամ մաշված հաշվառման վկայագրի փոխանակման գործառույթների պատվիրակումը պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին, հաստատում է օպերատորների ցանկը, սահմանում է օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները:»:		

7.	ՀՀ կառավարություն	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, ***Հոդված 1.***	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում «26.1-րդ» ձեւակերպումը փոխարինել «26.1-ին» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով դասական թվականների ճիշտ գրելաձեւը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: